ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Հայաստանի Հանրապետության 2007 թվականի համախմբված բյուջեն կկազմի՝

ա) եկամուտների գծով՝ 587.3 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի),

բ) ծախսերի գծով՝ **655.6** մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների),

գ) դեֆիցիտը (պակասուրդը)՝ **68.3** մլրդ դրամ.

2) Հայաստանի Հանրապետության պարտադիր սոցիալական ապահովագրության 2007 թվականի բյուջեն կկազմի՝

ա) եկամուտների գծով՝ 106.4 մլրդ դրամ (ներառյալ՝ անմիջապես պետական բյուջեից տրանսֆերտների տեսքով, ինչպես նաև պետական բյուջեով և համայնքների բյուջեներով պահպանվող հիմնարկներից պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների տեսքով ստացվող եկամուտները),

բ) ծախսերի գծով՝ 106.4 մլրդ դրամ.

3) Հայաստանի Հանրապետության համայնքների 2007 թվականի բյուջեները կկազմեն՝

ա) եկամուտների գծով՝ 39.2 մլրդ դրամ (ներառյալ՝ պետական բյուջեից ստացվող պաշտոնական տրանսֆերտները),

բ) ծախսերի գծով՝ 39.2 մլրդ դրամ:

Հոդված 2. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեն՝

	Գումարը (հազար դրամներով)
1. Եկամուտների գծով	**489,504,155.3**
2. Ծախսերի գծով	**557,850,936.1**
3. Դեֆիցիտը (պակասուրդը)	**68,346,780.8**

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորմանն ուղղել հետևյալ միջոցները՝

	Գումարը (հազար դրամներով)
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	68,346,780.8
այդ թվում՝	
Ա. Ներքին աղբյուրներ	26,989,784.0
այդ թվում՝	
1. Պետական արժեթղթեր՝ ընդամենը	**7,886,519.7**
որից՝	
ա) գանձապետական պարտատոմսեր	8,500,000.0
բ) մուրհակների մարում	(596,480.3)
գ) պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերի ետգնում	(17,000.0)
2. Այլ ներքին աղբյուրներ	**19,103,264.3**
որից՝	
ա) 2007 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներ	
բ) առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացված միջոցների օգտագործում	19,103,264.3
գ) այլ	-
Բ. Արտաքին աղբյուրներ	**41,356,996.8**
այդ թվում՝	
1. Վարկերի ստացում	**42,283,615.5**
2. Վարկերի մարում	**(6,281,618.7)**
3. Այլ արտաքին աղբյուրներ	**5,355,000.0**

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ օրենքով վերապահված իրավասությունների սահմաններում ձեռնարկել միջոցներ 2007 թվականի տարեվերջի դրությամբ գնաճի չափը 2006 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ 4 ± 1.5 տոկոս պահելու ուղղությամբ:

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորումը 2007 թվականի բյուջետային տարվա ընթացքում իրականացնել բացառապես «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 6. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի եկամուտները (առանց սույն օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետով և 11-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 15-17-րդ կե-

տերով սահմանված դեպքերում ստացվող եկամուտների), ըստ ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի, հետևյալ չափերով՝

	ԳՈՒՄԱՐԸ (հազար դրամներով)
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	**489,504,155.3**
այդ թվում՝	
Ա. ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**470,270,723.8**
որից՝	
1.Հարկային եկամուտներ	**439,801,367.2**
2. Պետական տուրք	**19,110,540.0**
3. Ոչ հարկային եկամուտներ	**11,358,816.6**
Բ. ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**4,071,052.0**
այդ թվում՝ Երևան քաղաքում տեղաբաշխված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից	**4,000,000.0**
Գ. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	**15,162,379.5**

Հոդված 7. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեից հատկացումները (առանց սույն օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետով և 11-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 15-17-րդ կետերով սահմանված դեպքերում կատարվելիք հատկացումների), ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման, հետևյալ չափերով՝

			ԳՈՒՄԱՐԸ (հազար դրամներով)
		ԸՆԴԱՄԵՆԸ ՇԱԽՍԵՐ	**557,850,936.1**
		այդ թվում	
01		**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**55,645,441.8**
		այդ թվում	
	01	Օրենսդիր մարմին, պետական կառավարում	12,266,056.1
	02	Պետական ֆինանսական կառավարում	10,557,665.5
	03	Արտաքին քաղաքական գործունեություն	7,972,240.1
	04	Արտաքին տնտեսական աջակցություն	19,348,149.6
	05	Ընդհանուր բնույթի իրավական գործունեություն	1,354,913.6
	06	Ընտրություններ և հանրաքվեներ	677,021.2
	07	Ընդհանուր բնույթի պետական այլ ծառայություններ	3,469,405.7
02		**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	**100,435,685.7**
		այդ թվում	
	01	Ռազմական կարիքներ	96,590,859.5
	03	Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր	3,844,826.2
03		**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**	**45,990,470.7**
		այդ թվում	
	01	Հասարակական կարգի պահպանություն	27,532,037.5
	02	Ազգային անվտանգություն	11,375,069.0
	03	Դատական գործունեություն	7,083,364.2
04		**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ**	**92,358,979.0**
		այդ թվում	

	01	Կրթության և գիտության բնագավառում պետական կառավարում	436,379.3
	03	Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	69,521,872.6
	04	Հատուկ ընդհանուր կրթություն	5,148,301.5
	05	Արտադպրոցական դաստիարակություն	2,171,654.5
	06	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	1,467,698.2
	07	Միջին մասնագիտական կրթություն	2,274,506.2
	08	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն	5,626,450.1
	10	Գիտություն	5,712,116.6
05		**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**	**47,573,828.5**
		այդ թվում	
	01	Առողջապահության բնագավառում պետական կառավարում	844,105.4
	02	Հիվանդանոցային բուժօգնություն	16,848,897.6
	03	Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն	16,766,318.6
	04	Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություններ	2,950,764.9
	05	Բուժօգնության այլ ծառայություններ	8,552,095.7
	06	Առողջապահական այլ ծառայություններ և ծրագրեր	1,611,646.3
06		**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ**	**64,035,799.9**
		այդ թվում	
	01	Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության բնագավառում պետական կառավարում	1,381,729.2
	02	Կենսաթոշակային ապահովում	17,977,327.7
	03	Պետական նպաստներ բնակչությանը	28,064,871.1
	04	Սոցիալական ապահովության միջոցառումներ	5,841,613.5
	05	Այլ սոցիալական ծրագրեր	10,770,258.4
07		**ՄՇԱԿՈՒՅԹ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՍՊՈՐՏ ԵՎ ԿՐՈՆ**	**15,084,564.0**
		այդ թվում	
	01	Մշակույթի, տեղեկատվության, սպորտի և կրոնի բնագավառում պետական կառավարում	639,882.4
	02	Գրադարաններ	934,514.7
	03	Թանգարաններ և ցուցահանդեսներ	1,347,632.0
	04	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	968,217.8
	05	Այլ մշակութային հիմնարկներ	506,661.5
	06	Արվեստ	3,297,759.3
	07	Կինեմատոգրաֆիա	653,739.8
	08	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	715,553.2
	09	Սպորտ	1,484,685.1
	10	Հեռուստառադիոհաղորդումներ	3,189,689.5
	11	Հրատարակչություններ, խմբագրություններ	767,390.9
	12	Տեղեկատվության ձեռք բերում	55,769.9
	14	Երիտասարդական ծրագրեր	342,845.6
	15	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	180,222.3
08		**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**	**22,678,387.0**
		այդ թվում	
	02	Բնակարանային տնտեսություն և բնակարանային շինարարություն	5,595,676.8

	03	Աղբահանություն, թափոնների վերամշակում և փողոցների մաքրում	20,856.1
	04	Ջրամատակարարում և կոյուղու համակարգերի շահագործում	11,609,754.1
	05	Այլ ծրագրեր	5,452,100.0
09		**ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԼԻՐ**	**17,264,236.5**
		այդ թվում	
	01	Վառելիքային և էներգետիկ համալիրի պետական կառավարում	729,656.8
	02	Էլեկտրաէներգետիկա	15,816,707.7
	03	Ատոմային էներգետիկա	717,872.0
10		**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ**	**24,490,721.9**
		այդ թվում	
	01	Գյուղատնտեսության բնագավառում պետական կառավարում	670,310.9
	02	Հողերի բարելավման աշխատանքներ	3,025,287.7
	03	Ձկնաբուծություն,ջրային տնտեսություն	2,125,493.4
	04	Բույսերի պաշտպանություն	389,011.0
	05	Անասնաբուժություն և հակահամաճարակային միջոցառումներ	2,856,697.4
	06	Անտառային տնտեսություն	1,345,267.0
	07	Տոհմաբուծություն,սերմնաբուծություն և այլ ծրագրեր	14,078,654.5
11		**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԱԾՈՆԵՐ (բացառությամբ վառելիքի), ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	**7,154,918.7**
		այդ թվում	
	01	Արդյունաբերության, հանքային հանածոների պաշարների, շինարարության և բնապահպանության բնագավառում պետական կառավարում	2,065,532.9
	02	Լեռնահանքային արդյունաբերություն և երկրաբանահետախուզություն	69,074.8
	04	Նախագծահետախուզական աշխատանքներ	994,983.3
	05	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	519,666.4
	06	Բնապահպանական այլ միջոցառումներ	1,695,776.8
	07	Այլ ծրագրեր	1,809,884.5
12		**ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊ**	**26,478,040.1**
		այդ թվում	
	01	Տրանսպորտի և կապի բնագավառում պետական կառավարում	599,503.1
	02	Ավտոմոբիլային և քաղաքային էլեկտրական տրանսպորտ	1,185,400.0
	07	Ճանապարհային տնտեսություն	24,223,137.0
	08	Կապ	470,000.0
13		**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**3,856,931.5**
		այդ թվում	
	01	Առևտրի, սպասարկումների, մատակարարման գործունեության և ընդհանուր բնույթի տնտեսական ծառայությունների բնագավառում պետական կառավարում	377,015.2
	03	Նյութական ռեսուրսների պետական պահուստների ձևավորում և պահպանում	2,238,291.2
	04	Զբոսաշրջիկություն	250,000.0

	05	Ընդհանուր բնույթի տնտեսական այլ ծառայություններ	991,625.1
14		**ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՃԱԽՍԵՐ**	**34,803,240.8**
		այդ թվում	
	01	Պետական պարտքային պարտավորությունների հետ գործառնություններ	11,498,317.2
	02	Տրանսֆերտային վճարումներ ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներ	18,023,143.9
	06	Այլ ծրագրեր	5,281,779.7

Հոդված 8. Հաստատել սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, հետևյալ չափերով՝

	ԳՈՒՄԱՐԸ (հազար դրամներով)
ԸՆԴԱՄԵՆԸ ՃԱԽՍԵՐ	**557,850,936.1**
այդ թվում՝	
ԸՆԹԱՑԻԿ ՃԱԽՍԵՐ	**401,875,704.2**
այդ թվում՝	
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	**40,314,521.9**
այդ թվում՝	
- հատուկ նպատակային ֆոնդերից տրվող պարգևատրում	359,150.8
- քաղաքացիական ծառայողների պարգևատրման ֆոնդ	632,846.2
ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ	**11,498,317.2**
այդ թվում՝	
Տոկոսավճարներ ներքին պարտքի դիմաց	7,822,398.9
Տոկոսավճարներ արտաքին պարտքի դիմաց	3,675,918.3
ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	**19,676,129.2**
այդ թվում՝	
Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ	852,608.7
Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներ	18,823,520.5
ԸՆԹԱՑԻԿ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	**91,543,652.6**
այդ թվում՝	
Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ	17,518,291.2
Թոշակներ	17,912,535.0
Կրթաթոշակներ	2,037,057.6
Նպաստներ	28,204,899.4
Այլ ընթացիկ տրանսֆերտային վճարներ	25,870,869.4
այդ թվում՝	
- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	4,040,484.3
- ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցում	23,580.0
- ընթացիկ ներքին այլ տրանսֆերտային վճարներ	20,936,068.3
- օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին	870,736.8
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԵՎ ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՃԱԽՍԵՐ	**238,843,083.3**

այդ թվում՝	
Ապրանքների ձեռքբերում	11,328,042.5
այդ թվում՝	
Գույք, գրասենյակային ապրանքներ և նյութեր	3,129,201.0
այդ թվում՝	
- գրասենյակային ապրանքներ և նյութեր	1,265,296.5
- գույք և սարքավորումներ	367,133.0
- փափուկ գույք և հանդերձանք	1,496,771.5
Դեղորայք և վիրակապային նյութեր	3,411,905.4
Սննդամթերք	3,605,180.7
Այլ ծախսեր	1,181,755.4
Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ	2,384,895.5
Տրանսպորտային ծառայությունների վճարներ	3,872,699.2
Կապի ծառայությունների վճարներ	2,515,373.6
Կոմունալ ծառայությունների վճարներ	2,782,682.9
այդ թվում՝	
էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր	2,414,947.1
Ջրմուղ- կոյուղուց օգտվելու վարձի վճարման ծախսեր	276,561.7
Այլ կոմունալ ծախսեր	91,174.1
Այլ ծախսեր	215,959,389.6
այդ թվում՝	
Գույքի վարձակալության ծախսեր	279,385.5
այդ թվում՝	
- շենքերի, շինությունների և բնակարանների վարձակալության ծախսեր	279,385.5
Արտագերատեսչական պահպանության ծախսեր	899,098.0
Հարկերի,տուրքերի և այլ պարտադիր վճարների կատարման ծախսեր	51,417.0
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների նստաշրջանային ծախսեր	39,600.0
Ներկայացուցչական ծախսեր	619,695.5
Ղեկավարի ֆոնդ	150,000.0
Այլ ծառայությունների ձեռքբերման ծախսեր	213,920,193.6
այդ թվում՝	
- ՀՀ դեսպանությունների և ռազմական կցորդների պահպանման ծախսեր	4,632,359.8
ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ	**134,665,055.0**
այդ թվում՝	
ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	**85,088,915.6**
այդ թվում՝	
ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ	**41,005,145.5**
ՆԱԽԱԳԾԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	**2,735,337.0**
ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	**42,000.0**
ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	**2,100,000.0**
ԿԱՊԻՏԱԼ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	**32,936,979.5**
այդ թվում՝	
Շենքերի, շինությունների և բնակարանների ձեռքբերման ծախսեր	2,555,500.0
այդ թվում՝	
Սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր	12,358,597.8
Տրանսպորտային միջոցների ձեռքբերման ծախսեր	3,162,650.4
Հողի ձեռքբերման ծախսեր	40,000.0
Այլ ակտիվների ձեռքբերման ծախսեր	14,820,231.3
ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ-ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	**386,690.0**
ԿԱՊԻՏԱԼ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	**5,882,763.6**

ԿԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՃԱԽՍԵՐ	**49,576,139.4**
ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ՝ ՀԱՆԱԾ ՄԱՐՈՒՄԸ	**21,310,176.9**
այդ թվում՝	
Ներքին վարկավորում՝ հանած մարումը	1,962,027.3
այդ թվում՝	
Վարկերի տրամադրում	2,663,280.0
Վարկերի մարումից մուտքեր	(701,252.7)
Արտաքին վարկավորում՝ հանած մարումը	19,348,149.6
այդ թվում՝	
Վարկերի տրամադրում	19,402,428.0
Վարկերի մարումից մուտքեր	(54,278.4)

Հոդված 9. Սահմանել, որ՝

1) 2008 թվականի հունվար ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը չի շարունակի 2007 թվականի բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումների իրականացումը.

2) 2007 թվականի ընթացքում առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացվող արտարժութային միջոցները կուտակվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում՝ սեփականաշնորհման արտարժութային (ԱՄՆ դոլարով) հատուկ հաշվում, իսկ Հայաստանի Հանրապետության դրամով ստացվող միջոցները՝ գանձապետական միասնական հաշվի սեփականաշնորհման հատուկ ենթահաշվում.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը սույն օրենքով նախատեսված բյուջետային վարկը տրամադրվում է մինչև 2010 թվականի հունվարի 1-ը մարման ժամկետով՝ տարեկան 0.01 տոկոս տոկոսադրույքով.

4) 2007 թվականին քաղաքացիական ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը կազմում է **35500** դրամ, հարկային և մաքսային ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը՝ 55500 դրամ, իսկ յուրաքանչյուր պետական մարմնի քաղաքացիական ծառայողների տարեկան պարգևատրման ֆոնդի միասնական տոկոսային դրույքաչափը՝ այդ մարմնի գծով Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեով նախատեսված քաղաքացիական ծառայողների աշխատավարձի տարեկան ֆոնդի 10 տոկոսը.

5) Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2007 թվականի բյուջետային տարում էլեկտրաէներգիայի անընդհատ և անխափան մատակարարում պահանջող առավել կարևոր նշանակության սպառողների համար էլեկտրաէներգիա բաշխող ընկերություններին բյուջետային երաշխիքներ չի տրամադրում.

6) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28[1]-րդ հոդվածի I մասի 1.1-րդ կետի «դ» ենթակետով և 1.2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված՝ Երևան քաղաքի տարածքում գոյացող եկամտատեսակները 2007 թվականին (մինչև Երևան քաղաքի կարգավիճակի կամ քաղաքում տեղական ինքնակառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունների մասին օրենքի ընդունումը) ամբողջությամբ ուղղվում են Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորմանը.

7) համայնքների բյուջեներին «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածով եկամտահարկից և շահութահարկից նախատեսված մասհանումները 2007 թվականի բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չեն կատարվում, իսկ բնապահպանական վճարներից մասհանումները կատարվում են «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

8) սույն օրենքով նախատեսված ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարի՝ ըստ առանձին համայնքների բաշխման նպատակով իրականացվող հաշվարկներում (համաձայն «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի) օգտագործվում են յուրաքանչյուր համայնքի գծով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված՝ այդ համայնքի բյուջե 2005 թվականին վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան գումարները (առանց հողի հարկի և գույքահարկի գծով 2005 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև 2005 թվականին հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների), ավելացված Հայաստանի Հանրապետության օրենքներով և համայնքների ավագանիների կողմից (ավագանիներին օրենքով տրված իրավասությունների սահմաններում) ընդունված որոշումներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների 2005 թվականի բյուջեներում եկամուտների կորուստների գումարները: Սահմանել, որ այն համայնքների գծով, որոնց տեղական ինքնակառավարման մարմինները 2005 թվականի հունիսի 1-ի դրությամբ հանդիսանում են գույքահարկ վճարող ֆիզիկական անձանց հաշվառող, 2007 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվում են այդ համայնքների ղեկավարների կողմից հայտնած ելակետային տվյալները.

9) Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2005 թվականի բյուջեներում առաջացած եկամուտների կորուստների գումարների փոխհատուցման նպատակով համայնքների բյուջեներին սույն օրենքով նախատեսված ամբողջ գումարի վճարմամբ, այդ կորուստները համարվում են ամբողջությամբ փոխհատուցված.

10) քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագած պարտքի դիմաց պետական կառավարչական հիմնարկի ձեռք բերած գույքի իրացումից եկամուտները հաշվեգրվում են այն հաշիվներին, որտեղ պետք է հաշվեգրվեր տվյալ պարտքի գումարը.

11) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների հիման վրա գույքն առանձնացնելիս, գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկը պարտավոր է մատակարարին վճարել վերջինիս ներկայացրած հարկային հաշվում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարը, մատակարարի անունից այն վճարելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան եկամտային հաշվին, որպես մատակարարի՝ ավելացված արժեքի հարկի գծով պարտավորության կատարում.

12) պետության սեփականություն ճանաչվող և Երևանի քաղաքապետարանին հանձնվող ինքնակամ կառուցված շենք կամ շինություն հանդիսացած անշարժ գույքի ուղղակի վաճառքից կամ աճուրդով օտարումից Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտներն ուղղվում են Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի, ինչպես նաև պետականացված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և քանդման ենթակա նման գույքի քանդման հետ կապված ծախսերի ֆինանսավորմանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով.

13) սույն օրենքի N 1 հավելվածում «Երևանի համաքաղաքային նշանակության ծախսեր» ծրագրով Երևանի քաղաքապետարանի գծով նախատեսված ծախսերի ֆինանսավորումը 2007 թվականին իրականացվում է Երևան քաղաքում տեղաբաշխված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կապիտալի գործառնություններից ստացվող եկամուտների՝ Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջե ստացմանը համամասնորեն.

14) Երևան քաղաքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման դեպքում օրենսդրությամբ սահման-

ված կարգով կատարվող վճարների հաշվին 2007 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ուղղվում են Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորմանը.

15) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման գծով Հայաստանի Հանրապետության անունից իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող վճարների գումարների 2007 թվականի օգտագործման ուղղությունները (տարեկան ծախսերի նախահաշվի ձևով) և կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սույն կետում նշված ծախսերի ֆինանսավորումը, հաստատված նախահաշվին համապատասխան, 2007 թվականին իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման գծով Հայաստանի Հանրապետության անունից իրականացվող ծառայությունների դիմաց 2007 թվականին ստացվող վճարների գումարների, ինչպես նաև մինչև 2007 թվականի հունվարի 1-ը մատուցված ծառայությունների դիմաց ստացված վճարների՝ 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ չօգտագործված գումարների հաշվին.

16) «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ այդ փոխհատուցումն ստացած անձանց աղքատության ընտանեկան նպաստներ ստացողների ցուցակներից հանելու համար.

17) 2007 թվականին շարունակվում է «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրումը՝ «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ կետով հաստատված ծրագրի շրջանակներում հաշվառված անձանց մասով՝ այդ ծրագրին համապատասխան.

18) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ կետին համապատասխան՝ պետական հիմնարկների համար Հայաստանի Հանրապետության կառավարության ընդունած որոշումների համաձայն բացված արտաբյու-

ջետային միջոցների հաշիվների (բացառությամբ դատական, իրավապահ և դատական ակտերի հարկադիր կատարման մարմինների դեպոզիտային, իրավաբանական անձանց սպասարկման նպատակով պետական հիմնարկների համար բացված, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համար բացված դեպոզիտային (արտարժութային) հաշիվների և Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հաշիվների), ինչպես նաև հարկային պետական ծառայության, մաքսային պետական մարմնի և ճանապարհային ոստիկանության աշխատակիցների խրախուսման և/կամ համակարգի զարգացման նպատակային ֆոնդերի հաշիվների միջոցների շրջանառությունը 2007 թվականի ընթացքում իրականացվում և այդ հաշիվների մուտքերի և ելքերի նախահաշվային և փաստացի ցուցանիշները Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվություններում արտացոլվում են որպես պետական բյուջեի համապատասխան մուտքեր և ելքեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Ընդ որում, նախահաշիվներով նախատեսվող 2007 թվականի բյուջետային տարվա եկամուտների գումարների չափով ենթակա են ավելացման սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների գումարները, ծախսերի նախահաշվային գումարների չափով՝ սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները (սույն կետում նշված նախահաշիվներին համապատասխան ֆինանսավորվող ծրագրերը և դրանց գծով նախատեսվող ծախսերը որպես առանձին լրացուցիչ ծրագրեր արտացոլելով սույն օրենքի N 1 հավելվածի՝ այդ ծրագրերին համապատասխանող խմբերում և ենթախմբերում), իսկ եկամուտների և ծախսերի նախահաշվային գումարների դրական կամ բացասական տարբերության չափով՝ համապատասխանաբար պակասեցման կամ ավելացման սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը և սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների համապատասխան գումարները.

19) սույն օրենքի N 7 հավելվածով ներկայացված ծրագրերի՝

ա) իրականացումը բնութագրող արդյունքի ցուցանիշները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, ընդ որում, այդ ցուցանիշների կատարման մասին հաշվետվության արժանահավատության համար պատասխանատու են այդ ծրագրերն իրականացնող համապատասխան պետական կառավարման մարմինները,

բ) գանձապետական համակարգի միջոցով կատարումը և կատարման նկատմամբ հսկողությունն

իրականացվում սույն օրենքի N 1 հավելվածին համապատասխան:

Հոդված 10. Հաստատել՝

1) սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված բյուջետային հատկացումների բաշխումը՝ ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների՝ սույն օրենքի N 1 հավելվածի համաձայն.

2) Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման դոտացիաների ձևով տրամադրվող հատկացումների՝ ըստ գործոնների բաշխման ենթակա հետևյալ ընդհանուր գումարները՝

- «ա» գործոնով և 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքներին տրամադրվող դոտացիայի ընդհանուր գումարը՝ **8,673,039.2** հազար դրամ, որից 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքին տրամադրվող դոտացիայի տարեկան գումարը՝ 1,500.0 հազար դրամ,
- «բ» գործոնով տրամադրվող դոտացիայի ընդհանուր գումարը՝ 8,845,252.0 հազար դրամ.

3) համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ֆինանսական համահարթեցման դոտացիաներ և Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2005 թվականի բյուջեներում եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով գումարներ տրամադրելու համար սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալների բաշխումն՝ ըստ առանձին համայնքների՝ սույն օրենքի N 2 հավելվածի համաձայն.

4) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգի 2007 թվականի ծախսերի նախահաշիվը՝ 2,140,000.0 հազար դրամ գումարով՝ սույն օրենքի N 3 հավելվածի համաձայն.

5) Հայաստանի Հանրապետության պարտադիր սոցիալական ապահովագրության 2007 թվականի բյուջեն, եկամուտների և ծախսերի գծով՝ 106,373,623.1 հազար դրամ գումարով՝ սույն օրենքի N 4 հավելվածի համաձայն.

6) «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեից սուբվենցիաներ ստացող համայնքների ցանկը և այդ սուբվենցիաները տրամադրելու համար նախատեսված հատկացումների գումարները՝ սույն օրենքի N 5 հավելվածի համաձայն.

7) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2007 թվականի՝

ա) վարչական ծախսերի նախահաշիվը՝ 3,557,932.0 հազար դրամ գումարով՝ սույն օրենքի N 6 հավելվածի համաձայն,

բ) կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը՝ 3,096,269.7 հազար դրամ.

8) սոցիալ-մշակութային ոլորտի առանձին պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող ծրագրերի գծով սույն օրենքի N 1 հավելվածով սահմանված բյուջետային հատկացումների բաշխումը ծրագրային դասակարգմամբ՝ սույն օրենքի N 7 հավելվածի համաձայն«

Հոդված 11. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կառավարությանը 2007 թվականին անհրաժեշտության դեպքում՝

1) վերաբաշխել սույն օրենքի N 1 հավելվածում բյուջետային ծախսերի գործառական դասակարգման նույն խմբին և ենթախմբին պատկանող նույն ծախսային ծրագիրն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների միջև՝ նրանց գծով տվյալ ծրագիրն իրականացնելու համար սույն օրենքով հաստատված հատկացումները.

2) փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարել բյուջետային ծախսերի գործառական դասակարգման նույն խմբին և ենթախմբին դասվող՝ սույն օրենքի N 1 հավելվածով սահմանված նույն ծախսային ծրագիրն իրականացնող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության համապատասխան, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության դատական իշխանության մարմինների ցանկերում.

3) սույն կետով սահմանված դեպքերում կատարված ծախսերը և ստացված եկամուտներն արտահայտելով Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում և այդ գումարների չափով ավելացնելով սույն օրենքի 2-րդ և 6-8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների և ծախսերի (դրանք արտացոլելով նաև սույն օրենքի N 1 հավելվածի 14 խմբի 06 ենթախմբում, որպես առանձին լրացուցիչ ծախսային ծրագրեր) գումարները, Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացնել՝

ա) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարումները,

բ) Հայաստանի Հանրապետության հարկային կամ մաքսային մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունների (բացառությամբ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների) մարման համար անհրաժեշտ վճարումները,

գ) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ոչ կառավարչական բնույթի գործունեություն իրականացնող պետական (բյուջետային) հիմնարկների պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրում պետական գրանցման, կնիքների պատրաստման թույլտվության, ինչպես նաև կազմակերպությանը հանձնված գույքի գրանցման համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարումները,

դ) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքը ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի գծով ծախսերը,

ե) սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամներին վարորդական իրավունքի վկայական և ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, ինչպես նաև ավտոմեքենայի գրանցման ու վերագրանցման համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարումների գծով այդ հաշմանդամների փոխարեն, նշված օրենքի 31-րդ հոդվածի պահանջների համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կատարվող ծախսերը.

4) պետական սեփականություն համարվող գույքը հիմնադրամներին վարձակալության հանձնելիս՝ հաշվարկված վարձակալական վճարները, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում, թողնել հիմնադրամների տնօրինությանը՝ որպես Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճար՝ առանց սահմանափակման, այդ գումարներն արտահայտելով Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունների ծախսային մասում, որպես պետական բյուջեից (Հայաստանի

Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից) հիմնադրամներին կատարված հատկացումներ, իսկ եկամուտներում՝ որպես պետական բյուջե այդ հիմնադրամների կողմից մուծված վարձակալական նույն չափերի վճարների ստացում.

5) բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածներում պետական բյուջեում՝ սույն օրենքի համաձայն բյուջետային ելքերի ֆինանսավորման համար միջոցների անբավարարության առաջացման դեպքում, ժամանակավորապես, մինչև 2007 թվականի դեկտեմբերի 15-ը վերականգնելու պայմանով, ներգրավել առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացված միջոցների կուտակման նպատակով բացված սեփականաշնորհման արտարժութային և դրամային հաշիվներում միջոցների առկա մնացորդների՝ սույն օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի ֆինանսավորմանը չուղղված գումարները, ներկայացնելով այդ հաշիվների շարժը Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում (առանձին հավելվածով).

6) սույն օրենքի 6-րդ հոդվածով բյուջետային եկամուտների, ըստ դրանց ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի գծով սահմանված համապատասխան գումարները պետական բյուջեի կատարման ընթացքում գերազանցած՝ լրացուցիչ ստացված եկամուտների գումարի չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների, ինչպես նաև ըստ այդ եկամուտների հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելիության համապատասխան փոփոխության ենթարկել՝ բյուջետային ծախսերի ֆինանսավորման համար սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային հատկացումների գումարները և N 1 հավելվածով նախատեսված «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրի (և/կամ նույն հավելվածով նախատեսված որևէ այլ ծախսային ծրագրի) գծով սահմանված հատկացումները, և/կամ սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) և սույն օրենքի 3-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների համապատասխան գումարները, և դրանց օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան (սույն կետի գործողությունը չի տարածվում սույն հոդվածի 3-րդ, 11-րդ, 15-17-րդ կետերով, ինչպես նաև սույն օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետով նախատեսված դեպքերի վրա).

7) բյուջետային վարկերի վերադարձից ստացվող մուտքերի՝ սույն օրենքով սահմանված գումարը պետական բյուջեի կատարման ընթացքում գերազանցած՝ բյուջետային վարկերի վերադարձից լրացու-

ցիչ ստացված մուտքերի չափով ավելացնել սույն օրենքի N 1 հավելվածով համապատասխան մուտքային ծրագրի գծով վարկերի վերադարձից նախատեսված մուտքերի գումարը (կամ, եթե սույն կետում նշված մուտքային ծրագրերով վարկի վերադարձ կատարած անձանցից սույն օրենքի N 1 հավելվածում մուտքեր նախատեսված չեն, դրանք որպես առանձին մուտքային լրացուցիչ ծրագիր, արտացոլել սույն օրենքի N 1 հավելվածի 14 խմբի 06 ենթախմբում), ինչպես նաև ըստ այդ մուտքերի հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելիության համապատասխան փոփոխության ենթարկել՝ սույն օրենքի 2-րդ, 7-րդ, 8-րդ հոդվածներով հաստատված և N 1 հավելվածով նախատեսված «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» ծախսային ծրագրի (և/կամ նույն հավելվածով նախատեսված որևէ այլ ծախսային ծրագրի) գծով սահմանված հատկացումները, և/կամ սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) և սույն օրենքի 3-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների համապատասխան գումարները: Բյուջետային վարկերի վերադարձից ստացվող մուտքերի՝ սույն օրենքով սահմանված գումարը պետական բյուջեի կատարման ընթացքում գերազանցած՝ բյուջետային վարկերի վերադարձից լրացուցիչ ստացված մուտքերի օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան.

8) բյուջետային տարվա արդյունքներով՝ գերազանցել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) գումարը՝ ներքին և արտաքին աղբյուրներից ստացված փոխառությունների՝ սույն օրենքով նախատեսված մարումների գծով առաջացող տնտեսումների գումարի չափով և նույն չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարները, 3-րդ հոդվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների համապատասխան գումարները և N 1 հավելվածով նախատեսված «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» կամ որևէ այլ ծախսային ծրագրի գծով սահմանված հատկացումները, և դրանց օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան.

9) վերաբաշխել սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2007 թվականի ծախսերը

(ինչպես ըստ ծախսային հոդվածների, այնպես էլ կոմիտեի կենտրոնական ապարատի և ստորաբաժանումների միջև), այն պայմանով, որ թույլ չտրվի կոմիտեի՝ սույն օրենքի N 1 հավելվածում նախատեսված ծախսային ծրագրերի գծով նախատեսված հատկացումների ծավալների փոփոխություն և սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված յուրաքանչյուր ծախսային հոդվածի գծով նախատեսված ծախսերի ընդհանուր գումարի կրճատում՝ 15 տոկոսի, կամ ավելացում՝ 30 տոկոսի չափով.

10) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ և 36.5 հոդվածներին և սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 12-րդ կետերին համապատասխան թույլատրվող վերաբաշխումներով պայմանավորված փոփոխություններ կատարել սույն օրենքի NN 3-5 հավելվածներում, ինչպես նաև N 1 և N 7 հավելվածների համապատասխան աղյուսակներում.

11) սույն օրենքի 6-րդ հոդվածով հաստատված եկամուտների կազմում չնախատեսված և պետական բյուջե մուտքագրված նվիրաբերված գումարներն ըստ նվիրաբերողի կողմից որոշված ուղղությունների, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն օգտագործելու դեպքում, այդ գումարների չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների և ըստ այդ եկամուտների հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելիության փոփոխության ենթարկել՝ սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարներն ու N 1 հավելվածով նախատեսված սույն կետում նշված եկամուտների հաշվին ֆինանսավորվող համապատասխան ծախսային ծրագրերի գծով սահմանված հատկացումները (կամ, եթե սույն կետում նշված եկամուտների հաշվին ֆինանսավորվող ծախսային ծրագրերը նախատեսված չեն սույն օրենքի N 1 հավելվածում, դրանք որպես առանձին լրացուցիչ ծրագրեր արտացոլել սույն օրենքի N 1 հավելվածում՝ այդ ծրագրերին համապատասխանող խմբերում և ենթախմբերում) և/կամ սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) և սույն օրենքի 3-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների համապատասխան գումարները.

12) պահպանելով սույն օրենքի N 1 հավելվածում ներկայացված ծախսային ծրագրերի գծով հատկացումների ընդհանուր գումարները՝ վերաբաշխել դրանք ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ սահմանված հոդվածների (առանց սահմանափակման).

13) բյուջետային ելքերի ֆինանսավորման համար 2007 թվականի բյուջետային տարվա ընթացքում

պետական բյուջեում միջոցների անբավարարության առաջացման դեպքում դրանց ֆինանսավորմանն ուղղել Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի և/կամ առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացված միջոցների՝ սույն օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի ֆինանսավորմանը չուղղված գումարները, ինչպես նաև սույն օրենքի 3-րդ հոդվածով հաստատված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման արտաքին աղբյուրների կազմում չնախատեսված, սակայն 2007 թվականի բյուջետային տարվա ընթացքում փաստացի ստացված վարկերի (կամ դրանց առանձին մասնաբաժինների) գումարները.

14) Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծախսային ծրագրերի կատարման ընթացքին նպաստելու նպատակով.

ա) սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված ծրագրերը ֆինանսավորելիս (նշված ծախսերի ֆինանսավորման համապատասխան վարկային աղբյուրների առկայությամբ), չգործադրելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված բյուջետային հատկացումների վերաբաշխման մեխանիզմը և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի դրույթները, գերազանցել դրանց գծով սույն օրենքի N 1 հավելվածի N 17 աղյուսակով սահմանված՝ արտաքին աղբյուրներից ստացվող վարկերի հաշվին առանձին ծրագրերի գծով սահմանված հատկացումների գումարները, այդ ծրագրերի գծով սահմանված հատկացումների ընդհանուր գումարը, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) և 3-րդ հոդվածով հաստատված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների համապատասխան գումարները.

բ) 2007 թվականի բյուջետային տարվա ընթացքում ֆինանսավորել սույն օրենքի N 1 հավելվածով չնախատեսված վարկային ծրագրերը՝ դրանց գծով օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը հատկացված նպատակային վարկային միջոցների հաշվին, եթե այդ ծրագրերի գծով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կնքված վարկային, կամ այլ ֆինանսական պարտավորություններ նախատեսող միջազգային պայմանագրերն օրենքով սահմանված կարգով վավերացված կամ հաստատված են: Այդ ծրագրերի գծով Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջե ստացվող վարկերի հաշվին կատար-

ված ծախսերի գումարի չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը, 3-րդ հոդվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների համապատասխան գումարները, ինչպես նաև 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները (սույն կետում նշված ծախսերը որպես առանձին լրացուցիչ ծրագրեր արտացոլելով սույն օրենքի N 1 հավելվածում՝ այդ ծրագրերին համապատասխանող խմբերում և ենթախմբերում),

գ) 2007 թվականի բյուջետային տարվա ընթացքում լրացուցիչ ֆինանսավորել սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված, ինչպես նաև ֆինանսավորել այդ հավելվածով չնախատեսված դրամաշնորհային ծրագրերը՝ դրանց գծով օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից մինչև 2007 թվականի հունվարի 1-ը ստացված միջոցների չօգտագործված մնացորդի հաշվին, այդ միջոցների հաշվին կատարված ծախսերի գումարի չափով ավելացնելով սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը, 3-րդ հոդվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների համապատասխան գումարները, ինչպես նաև 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները (սույն օրենքի N 1 հավելվածով չնախատեսված դրամաշնորհային ծրագրերն որպես առանձին լրացուցիչ ծրագրեր արտացոլելով սույն օրենքի N 1 հավելվածում՝ այդ ծրագրերին համապատասխանող խմբերում և ենթախմբերում),

15) պետության սեփականություն ճանաչվող և Երևանի քաղաքապետարանին հանձնվող ինքնակամ կառուցված շենք կամ շինություն հանդիսացած անշարժ գույքի ուղղակի վաճառքից կամ աճուրդով օտարումից Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտների հաշվին կատարված ծախսերի գումարի չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների և 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները (սույն կետում նշված եկամուտների հաշվին ֆինանսավորվող Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերը, ինչպես նաև պետականացված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և քանդման ենթակա նման գույքի քանդման հետ կապված ծախսերն արտացոլելով սույն օրենքի N 1 հավելվածի 14 խմբի 02 ենթախմբում՝ որպես առանձին լրացուցիչ ծրագիր).

16) Երևան քաղաքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման դեպքում Հայաստանի Հանրապե-

տության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվող վճարների հաշվին Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտների գումարի չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների և 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները (սույն օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ կետի համապատասխան ծախսերն արտացոլելով սույն օրենքի N 1 հավելվածի 14 խմբի 02 ենթախմբում՝ որպես առանձին ծրագիր).

17) «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված, սակայն այդ տարում չստացված և սույն օրենքի 6-րդ հոդվածով հաստատված եկամուտների կազմում չնախատեսված պաշտոնական տրանսֆերտների գումարները 2007 թվականին ստանալու դեպքում, այդ գումարներն առաջնահերթության կարգով ուղղել դրանց չստացմամբ պայմանավորված բյուջետային պարտքերի մարմանը.

18) բյուջետային տարվա ընթացքում, չգերազանցելով պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի)՝ սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված գումարը, վերաբաշխել պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման առանձին աղբյուրների առանձին տարրերի միջև դրանց գծով սույն օրենքի 3-րդ հոդվածով հաստատված գումարները՝ դրանից բխող համապատասխան փոփոխություններ կատարելով սույն օրենքի NN 2-5 հավելվածներում և N 1 ու N 7 հավելվածների համապատասխան աղյուսակներում:

19) սույն օրենքի N 4 հավելվածով Հայաստանի Հանրապետության պարտադիր սոցիալական ապահովագրության 2007 թվականի բյուջեով նախատեսված եկամուտների, ըստ դրանց ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի գծով սահմանված համապատասխան գումարները բյուջեի կատարման ընթացքում գերազանցած՝ լրացուցիչ ստացված եկամուտների գումարի չափով ավելացնել սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով և սույն օրենքի N 4 հավելվածով հաստատված բյուջետային եկամուտների, ինչպես նաև ըստ այդ եկամուտների հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելիության համապատասխան փոփոխության ենթարկել՝ բյուջետային ծախսերի ֆինանսավորման համար սույն օրենքի N 4 հավելվածով նախատեսված բյուջետային հատկացումների գումարները և դրանց օգտագործումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 12. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ անհրաժեշտության դեպքում վերաբաշխել սույն օրենքի N 6 հավելվածով սահմանված վարչական ծախսերը (ըստ ենթահոդվածների) այն պայմանով, որ թույլ չտրվի վարչական ծախսերի սույն օրենքի N 6 հավելվածով

սահմանված յուրաքանչյուր ենթահոդվածի գծով նախատեսված ծախսերի կրճատում 15 տոկոսի կամ ավելացում՝ 30 տոկոսի չափով:

Հոդված 13. Սույն օրենքի NN 1-7 հավելվածները համարվում են սույն օրենքի անբաժանելի մասերը:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2007 թվականի հունվարի 1-ից: